ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԶԱՏԱԳՈՎԸ

Յ. ՇԱՀԱՄԻՐԵԱՆ
(«ՈՐՈԳԱՅԹ ՓԱՌԱՅ»)

Գրեց՝ ԻՐԱՋԵԿ

Ա.

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

Հայաստանի անկախութեան գաղափարը, որին այսօր այնպէս ջերմագին փարել է Հայ ժողովրդի ճնշող մեծամասնութիւնը, մանաւանդ նրա ազգային–քաղաքական կամքը ներկայացնող մեծ կուսակցութիւնը՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը, նոր ժամանակների ծնունդ չէ — ինչպէս թիւրիմացաբար կարծում են ոմանք: Նա ծնուած պիտի լինի եւ մեր ցեղի — կամ գոնէ նրա գիտակից մասի — փայփայած երազանքը դարձած հաւանաբար այն օրից, երբ հայ ժողովուրդը իր նախաւերջին — Ռուբինեանց անկախութիւնից զրկուելով, արեւելեան հպատակի ամենաղժնդակ վիճակին դատապարտուեց:

Այն իրողութիւնը, որ Հայաստանի վերջին անկախութիւնը, մեր օրերում, լոյսի պէս յանկարծ, անսպասելիօրէն ծագեց, այն էլ, կարծէք, պատահաբար, մեծ պատերազմի եւ ռուսական յեղափոխութեան հետեւանքով, այդ իրողութիւնը շատերին կարծել է տալիս, թէ անկախութեան գաղափարը հայ ազգի մտքի ու ձգտումների ծնունդը չի եղել, այլ նրան պատուաստուել է դրսից, արհեստականօրէն: Նրանք պարզ ասում են՝ անկախութեան գաղափարը ուրիշները բերին եւ փաթաթեցին մեր վզին:

Փաստը արտաքուստ մասամբ ճիշդ է, բայց ներքուստ — ո՛չ: Ով քիչ–շատ ծանօթ է մեր պատմութեան, անշուշտ, կը համաձայնի մեզ հետ, որ Հայաստանի անկախութեան գաղափարը գալիս է հին դարերից:

Եւ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել:

Ճշմարտութիւն է, դէթ մեր ներկայ հասկացողութիւնների համաձայն, որ ազգային անկախութիւնը անհրաժեշտ նախապայմանն է ժողովուրդների կատարեալ կամ ամբողջական ազատութեան — ե՛ւ քաղաքական, ե՛ւ տնտեսական–ընկերային, ե՛ւ մշակոյթային:

Ճշմարտութիւն է նաեւ, որ ժողովուրդների մէջ ազատութեան գաղափարը ծնւում է նրանց իրական վիճակից, կեանքի ըէալ պայմաններից եւ ո՛չ թէ օդի միջից է բռնւում նա:

Ուրեմն, եզրակացութիւն.—

1. Որ անկախութեան գաղափարն եւս կեանքի ծնունդ է եւ բխում է կեանքի իրական պայմաններից.

2. Որ ազատութեան ձգտող ամէն մի ժողովուրդ նախ եւ առաջ պէտք է ապահովի իր քաղաքական անկախութիւնը, որովհետեւ քաղաքական անկախութիւնը առաջին եւ անհրաժեշտ կայանն է ամբողջական ազատութեան:

Այս տեսակէտից հայ ժողովրդի դրութիւնը, գոնէ իր վերջընթեր անկախութիւնը կորցնելուց յետոյ, միշտ եղել է այնպէս, մանաւանդ 15–րդ դարից այս կողմ, որ նա չէր կարող չմտածել իր անկախութեան մասին — որպէս վերջնական փրկութեան նախապայմանի: Ասած է՝ դեղն ու դարմանը հիւանդին են պէտք եւ ոչ առողջին: Ազատութիւնն էլ ամենից առաջ պէտք է ստրուկներին եւ իրենց ազատութիւնը կորցրած ժողովուրդներին: Իսկ հայ ժողովուրդը իր անկախութիւնը կորցնելուց յետոյ՝ շարունակ եղել է ստրուկների ստրուկը եւ հպատակներից վատթարագոյնը:

Բաւական է ասել, որ բազմաթիւ մանր ու մեծ մահմեդական ցեղեր, մէկը միւսից բարբարոս ու գիշատիչ, ոմանք նրան հարեւան, ոմանք էլ իրենց անվերջ թափառումների ճանապարհին, եկել, հաստատուել են մեր երկրում եւ ասիական ամէն կարգի վայրենութիւններ գործել: Պատմութիւնը չա՞տ է